

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Գ Ի Տ Տ Լ Ի Ք

Արշալուսեայ Տիառայ. — Աւստրալ-հունդա-
րական յարող արշալուսեայ պարծանքն
պէտք չէ մոռցնել տան մեզի միւս արդիւ-
նաւոր գործն՝ որուն ձեռք զարկաւ Տիառա
անուն նաւը, որ անուանի եղեր էր Սմի-
տհիյառալընթաց ուղեորութեամբբը, բայց
հիմա ուրիշ խընդրակ մ'էր որ կը գործա-
ծէր զայն։ Պ. Գոիգցինս (Coiggins) բեւե-
ռախնդիր եռանդնալից խուզարկուն՝ ի
վարձու առաւ այդ նաւը արշալուսեայ մ'ընե-
լու Օպիի գետաբերանը, որպէս զի փորձէ,
եթէ կարելի է, վաճառականական յարա-
բերութիւն մը հաստատել Անգլիոյ և Քա-
րայի ծովուն ափանց հետ։ Եղանակն սաս-
տիկ մորկայից եղաւ, բայց յունիսի 26ին
անցաւ Տիառա Վլայկացի նեղուցը, առանց
շատ սառուցից պատահելու։ միայն Լուգ-
քեան կղզեաց մօտ բազմացան սառուցից
կոյտերն։ Օգոստոսի 1ին խարխիս նետեց
Օպիի գետաբերանը, առանց մեծ դժուա-
րութեանց դէմ կուռելու։ Ի միւսս գե-
տոյն՝ աւազակոյտ պատուար մը գտաւ, որ
շատ վտանգաւոր կը թուէր։ ասկէց զատ
գետոյն բուն հոսանքն ալ կը դժուարացը-
նէր նաւարկութիւնը։ Աշխարհացոյց տախ-
տակաց վրայ նշանակեալ կղզիք շատ ա-
ւելի հեռու են այն տեղէն քան զոր կը
սահմանէ աշխարհագրութիւնն, և շատ ու-
րիշ կղզիք ալ նշանակուած չեն, զուցէ սա-
ռոյցներէն ծածկուած ըլլալուն համար։
Պ. Գոիգցինս մէկ տարուան համար միայն
պաշար ունենալուն, խոհեմութիւն չհա-
մարեցաւ յառաջ մղել ուղեորութիւնը գէպ
արեւելք։ և անցնելով դարձեալ Վլայկացի
նեղուցէն, հասաւ յարեւմտեան ափունս
Նոր-Զելանդի, փորձելու առ ի գտանել
գէտաւ աւազրա-հունդարական արշալա-
նաց։ Անկէց ուղղեց գնաւը գէպ ի Համ-
մերսփորդի նաւամատոյցը, և հազիւ թէ
հօն հասեր էր, հասաւ և Նիքոլաս Բուս
նաւն, հանդերձ նաւաստեօք Դեկտրոֆի։

Բոյա. — Բոյա պղտի քաղաք մ'է Ագրիա-
կան ծովուն վրայ, և ունի 2000 բնակիչ։
Կը տեսնուին հօն շատ մը գեղեցիկ աւե-
րակներ հոռովմէական Յոյիս Ալկուադա և

Ռիկուս Յոյիս անուն քաղաքաց, որք ու-
նէին 30,000 բնակիչ։ Սկալիմոսի Սկերոսի
օրերը, անանկ որ հոռովմէական բանակին
մէկ մասն ալ հօն կը կենար։ Իրին անցեալ
մեծութիւնը վկայող յիշատակարանաց մէջ
երեւելի է Ագոստոսի մէկ տաճարը, և
պիսկապոսանոցն, ծանուցեալ՝ տաճար Ա-
նահտայ անուամբ, որ ի միջին դարու փո-
խեցաւ ի պալատ քաղաքատեմական, Ոս-
կոյ դուռն (կամար Սերգիոսի) կորսեան
ճարտարապետութեամբ, և քաղաքին շըր-
ջանակէն դուրս ամփիթէատրոնը կամ կըր-
կէսը։ Նշանաւոր են նոյնպէս իրեւ յիշա-
տակարանք մերձաւոր ժամանակաց՝ մայր
եկեղեցին, և զղեակն՝ կառուցեալ ի Վե-
նետեկեցոց՝ եօթնեւտասներորդ դարուն
մէջ։ Բոլայի նաւահանգիստը Եւրոպիոյ
նաւահանգստաց մէջ գեղեցիկներէն ու
ապահովներէն մէկն է. աւստրիական տե-
րութիւնն մեծամեծ ծախքեր ըրաւ առա-
ջին կարգի ղինուորական նաւահանգիստ
ընելու համար զայն, և այնպէս ալ հրատա-
րակուեցաւ սկսեալ 1830 ամէն, շենովա-
ցոյ ու Վենետեկեցոյ մէկ պատերազմը,
1579ին, նշանաւոր ըրին Բոլա քաղաքն ու
նաւահանգիստը։

Անուան յարաբերութեան ազգաց. — Եւ-
րոպական ըովանդակ աշխարհի միագու-
մար՝ կը տեղափոխեն օրուան մէջ ի միլիոն
մարդ, և եթէ լմննալու ըլլան նորակառոյց
երկաթուղեաց գծերն՝ վեց տարիէն ետ-
քը, 22,500 մղոնն պիտի ըլլայ 37,300
մղոն։ Թղթատարութեանց պայտօնարանք
կը յուզարկեն տարուան մէջ 3,300 միլիոն
նամակ, որ է ըսել առաւել քան 99 միլիոն
օրուան մէջ։ Հեռագրական թիւք ասկէ
վեց տարի առաջ ունէին 56,166 աշխար-
հագրական մղոն երկայնութիւն, և այսօր
առաւել քան 777,000 մղոն, Հեռագրական
գիծ մը կը մեկնի ի Ս. Փրանկիսկոսէ, կը
հատանէ ամերիկեան ցամաքը և Ղվորան-
դակինն, կ'ընկանայ մինչև ցեւորայէ,
ցլիպերիա, ցլմուր, և մինչև Ասիոյ ա-
րեւելեան ծայրը։